

ԿՐՈՆԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ԴԷՄ ԱՌ ԴԷՄ

Կեսանքին Ունեցած Պարտքը

Իրաւունք կու տամ ամէն մարդու, որ կը սարսափի պարտքէն: Ծերունի մը այս մասին իր արձանագրած խրատը օր մը լամնանց ինձի, որուն մէջ կարեւոր տեղ յատկացուցած էր պարտքէն իր ունեցած սարսափին, եւ անոր փարստումին մէջ անձանօթ բարեբարի մը կատարած բարիքին: Կեսանքի մէկ դժբախտ պատահարին բերմամբ սնանկացած այս մարդը, իր արձանագրած խրատին մէջ այնքան նուիրակաճողութեամբ կը շեշտէ, թէ իրեն եղած այս բարիքը պէտք է սերունդէ սերունդ յիշուի իր գերդաստանին մէջ: Պարտատէրի եւ պարտասպանի աստուածաբանական հասկացողութիւնն ալ տրուած է Աստուածորդիին կողմէ, զոր ամէն անգամ "Հայր Մեր"-ը արտասանած ժամանակը յիշեցը: Մեք մեր պարտասպաններուն՝ մեզի դէմ յանցանք գործած մարդոց ներքով, Աստուած ալ, Իրեն ունեցած մեր "պարտքերը" մեր յանցանքները կը ներէ: Գործի մէջ ունեցած ձախողութեամբ պարտքերու տակ թաղուիլը, տարբեր տեսակի պարտասպան կը դարձնէ մեզ, քան՝ մեր սխալներու հետեւանքով կուտակուած ճիւղակեան թէ բարոյական պարտքերու տակ մնալը: Գործի մէջ անպատեման արկածախնդրութիւնն ալ կը մտնէ, սակայն ո՛չ թէ բախտ փորձելու հաճույլից աւարտով, այլ տրամաբանութեան գծած ուղիով, որուն համար մեր կողմէ կատարուած հաշարար կերպէն կրճատ տարբեր ըլլալ, քան գետնի վրայ կատարուած աշխատանքը: Ընդհանուր համար բնութեւն է, թէ՛ տունի հաշիւը, շուկայի հաշիւն չի՛ բռնէր երբեք: Գիտակցից ու իր պարկեշտութեան նախանձամոլորի մարդը վստահաբար շուտով կ'ուզէ "մարել" իր պարտքերը եւ կը սուկայ նորերը անկողնէ: Այս է պատճառը, որ իր պարտքերուն նկատմամբ բժայկանքի կ'ըլլայ: Սակայն, ինչքան ալ ինքզինք գերազանցէ պայտի մարդ մը, դարձեալ պարտք մը ունի վճարելիք: Ամէն մարդ այս աշխարհի վրայ, կեսանքին նկատմամբ ունի մեծ պարտք մը, որ Աստուած դրա անոր ունեցած, եւ զոր անպատեման պէտք է վճարէ ան՝ աշխատանք: Աշխատութիւնը մարդու ճիւղին պարտքն է: Այսպէս կը սորվեցնէ մեզի Աստուածաշունչը, որովհետեւ սարգումն դրախտէն վտարման ընթացքին տրուած Աստուծոյ անձեռով յատուց եկաւ այս մեծ "պարտքը":

Պարտք մը, որ սակայն մտահոգութիւն ու տագնապ չի ծնիր, այլ դրական իմաստով զբաղում մը, որ միաժամանակ ծուլութեան պիտի չյառաջանայ իր կատարումը: Երեսիդ քրտիքով պիտի ուտես հացդ": Այս եղանակով Աստուծոյ անձեռը (հմմտ Ծճ 3.19): Անգործութիւնը չարիք կը ծնի, կ'ընէ ժողովրդային իմաստութիւնը: Ամբողջութեամբ ճշմարիտ է խօսքը, որովհետեւ անգործութիւնը նաեւ մարդկային մտքի չարացման ուղին կը հարթէ, որ արբիւրն է ամէն տեսակ թէ՛ չարիքի եւ թէ բարիքի: Այդ պատճառ է, որ սատանան իր հրէշտային մեծութեամբ ու սափնակեցուցիչ բազմաճիւղ եղջիրներով կը յայտնուի իրեն նիւթը, բազմաթիւ ձեռքերուն մէջ պատրաստ ունեցողով ամէն տեսակ չարիք գործելու եւ տանջելու յատուկ իր "գործիքները": Մարդկային ցեղի պատմութեան ընթացքին մեծ համբաւ ունեցած ու նոյնքան ալ մեծ վատասակ թողած մարդիկ, միշտ հաւատացած են աշխատանքին: Երբեքն անոնք մեծ հաճախներ, հակա-

ռակ իրենց աստուածատուր կարողութեան, դարձեալ աշխատանքը կը գովեն, ու համեստորէն զանկիս կը ներկայացնեն իրեն պատճառ իրենց արձանագրած յաջողութեանց: Այդպիսի համեստ հաճախ մըն է աշխարհափոշակ իտալացի արուեստագէտ Միքելանճելոն, որուն համար յաջողութեան գաղտնիքը կը կապուած աշխատանքի անսահման ուժին մէջ: Ան կը պնդէ, որ մարդու մտքին մէջ երեսակայուած որեւէ կերպար, անպայման կարող է մարմարի վրայ քանդակել, եթէ կորովի ու ճարտար ձեռքը արուեստագէտին, հնագանդի անոր մտքին: Իր կենսագիրը ներկայացնելով անոր առօրեան, կ'ըսէ, թէ ան յոգնի չէր գիտէր: Գիշեր ստեն ընդոտ կ'արթնար ու դարձեալ կը սկսէր աշխատանքի: Երբեքն անոնք հազուադէպ կը քնանար, որպէսզի գիշեր ստեն արթնանային, պատրաստ ըլլար աշխատանքի...: Այս հաճախը ունէր նաեւ իտալացի արուեստագէտ մը, որ զինք կը ներշնչէր իր աշխատանքին մէջ: Աշխատանքի պահուն, Միքելանճելոն իր դիմաց կը դնէր սայլի մը մէջ նստած ծերունիի մը պատկերը, որուն հագած գոգնոցին վրայ գրուած էր "Ես կ'ուսանիմ տակալից": Դարձեալ համբաւուր մեծ երաժիշտներ՝ Մոցարթ, Պլեյհոլդն ու Սեպարտէն Պախ, աշխատանքին մէջ տեսած են մարդուն արժէքը ու յաջողութիւնը: Մոցարթ կ'ըսէ. "Աշխատութիւնը իմ ամէնէն մեծ հաճոյքն է": Պլեյհոլդն ինչպէս ըստ էության կ'ըսէ "Ո՛վ մարդ, օգնէ՛ ինքզինքդ": Իսկ Պախ յետապոյտէ կ'ըսէ. "Ես աշխատանքը եղաւ. ով որ ինձի պէս աշխատանք է, պէտք է ապահով ըլլայ, թէ կը յաջողի": Մեծ մարդոց յատուկ աշխատանքի այս ետանդը, անոնց մըտքին մէջ արթնացած է վճարելի "պարտք"-ի մը գիտակցութիւնը, զոր մարդ ունի այս կենսանքին նկատմամբ: Այս պարտքի գիտակցութիւնն է որ ծնունդ տուած է անձնականացելի ու անգին մշակութային արժէքներու, զորս կը վայելէ մարդկութիւնը այսօր: Հաճախեալ կարողութիւնը յերկնուստ տրուած պարգեւ է մարդուն: Սակայն ի՞նչ կ'արժէ անկիս, երբ աշխատութիւնը իրեն շարժակ, կենսիկ չկոչէ այդ շնորհքը: Ինչքան մարդիկ, ամէն օր, ժամանակը կը սպաննեն ծուլութեամբ: Ոմանք ժամանակը ինչպէ՞ս վատնելու համար մտածելու ալ ժամանակ կը տրամադրեն, որ շահ տակի մեծ մեղք է, քան՝ անգիտակցի կերպով ժամանակ սպաննելը: Ամէնքս ունին աշխատելու այդ պարտքը, այս աշխարհի հողեղէն բնակիչները ըլլալով: Այսօր մարդիկ երանքի կու տան այն մարդուն, որ իր պարտատէրութեան հանդէպ ունեցած բոլոր պարտքերը՝ հիւրանքով ու բարոյական, փակած կը հետանայ այս կենսանքին: Ոմանք իրենց հիւրանքով ու բարոյական պարտքերը իրենց զատկանքուն վրայ թողած, անպատասխանատու կերպով զանոնք պարտքերու տակ կը թաղեն, ու այդպէս հրաժեշտ կ'անեն այս կենսանքին...: Ամէնէն անփոք ծնողքը այն է, որ անմահ կացութեան կը մատնէ իր զատկանքը: Իսկ ինչքան հաճախ պիտի ըլլայ այն մարդուն խիղճը որ իր պարտատէրակները պատուած, ու իր բոլոր պարտքերուն վրայէն զիջ քշած, կ'անցնի անդեմական կենսանք...: Երանելի՛ է այն մարդը, որ կենսանքին հանդէպ ունեցած իր պարտքը՝ իր ստեղծագործ արդար աշխատանքը վճարած, կը մտնէ պատմութեան խորքը...:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԻՆ. ՉԻՖԹԵՄԱՆ

## ԵՐԲ ԿԸ ԲԱՅՈՒՆ ԳԻՐՔԻ ՍԸ ԷԶԵՐԸ...

Կը փորձէ՞ք հասկնալ մեր տեղատուութիւնները. մեր զատկանքը կը կոչենք բարեպաշտ անուններով, մեր ուկեղեցիկ լեզուն կը խաթարենք այստեղէն այնտեղէն որսացուած բառերով, յաջողութիւնն է ինքնահաստատում կը փնտռենք հետանալով մեր արմատներէն, մեր ինքնուրոյնութիւնը նեղ եւ նեղմտութիւն կը համարենք, օտարի լեզուով խօսիլ եւ գրել՝ յատաշփոթութիւն, փառք կ'ակնկալենք դրժուրի գին վճարելով: Ի վերայ ամենայնի, բացատրութիւնն է արդարացում կը ճարենք մեր հետազոտութեան համար, այսօր՝ հետազոտ, վաղը՝ անհետ կորուստ, երբ հասկնալու կարիք ալ պիտի չզգանք:

Ո՞վ է ինչպէ՞ս պիտի հասկնալ մեր զանգուածներուն, Հայաստանն է Սփիւռք, որ այս անփառունակ կացութեան յորտ պէտք է գալ: Բանալին ի՞նչ է: Այս արցաբանական արեւն է, որ բարեպաշտութիւնն է միայն ինձի, ըսելով որ Վիգէն Խեչումեան կը սիրէի, յաճախ կը յիշէի: Գիրքը ծանօթ էր. ԳԻՐԿ ՄՍԲԱՄՍԱՆ: Իր մեկնումն էտք կրկին բացի գիրքը եւ կանգ առի առաջին էջին վրայ. "Ես զգուշութեամբ բաց եմ անում անկիւններուն դեղնած մագաղաթ վաղնջական մատենանը, եւ նրա կուշ եկած թերթերի միջից սեղանին ու իմ ծնկերին է փոռն ժամանակի փոշին"... Ընթերցման հետ կը սկսի արկածախնդրութիւնը, ժամանակի փոշին որ յիշողութիւնն է, այս անգամ ոչ թէ հետազոտի ինքզինք կրկնող ոճի-արկածի պատմութիւն, այլ արմատներ նուանելու: Եւ "չքանում եմ գրատան երկար սեղանի աջ ու ձախ կողմերին նստած լրջալից գիտնականները, եւ իմ հայեաքի առջեւ բացում է անիրական թուանք մի ուրիշ աշխարհ":

Այդ աշխարհը ստանցքն է հայուն ինքնութեանն է ան չի գնուիր մեծ վաճառատուն: Ան կը գտնուի հայերէն գիրքին մէջ, հին թէ նոր, հեղինակը ըլլալ հին օրերու թոմսն թէ Ծերանիկը, մեզի մօտ՝ Ալիշանը թէ Երուսաղեմ, Վարդանան թէ Չարեանը, Չարեան թէ Օշականը, Համաստեղը թէ Վեհանյոյը, եւ միւսները... Վիգէն Խեչումեան, մագաղաթի էջերը կը վերածէ բաց պատմականի, ուրկէ կ'երեւի Հայոց Աշխարհը, սիրած տղան, բարքի պատաստին վրայ՝ Անի քաղաքը, ուր "անցիք բոլոր ու պարիսպ եւ նորոգում": Ժամանակակիցներս, գօտեպնդուելու համար, պէտք ունինք գիրքին, որպէսզի շարունակենք բոլոր ու պարիսպ նորոգել, մնալ, փոխանակ ըլլալու ճանապարհը շարունակելու թախտակեան հայ: Ընթերցումը կենսական է ինքնութիւն պահելու, այսպէս, սատիւնանաբար կը դառնանք ծագումով հայ, նոյնիսկ եթէ մեծ մայրիկին կիրակնօրեայ խոհանոցը հաճելի ըլլայ մեզի եւ մեր օտար բարեկամներուն:

Որքան ալ զարմանալի թուի շատերուն, ներկայիս

հայերէն ընթերցումը սպազան նախատեսելու եւ կերտելու ազգային քաղաքականութիւնն է, այսպէս կը խրիք անմիջականի եւ անմիջական անվաղորդայն պատշաճեցումներու եւ շահախնդրութիւններու ճահիճին մէջ: Հայերէն գիրքի ընթերցման բացակայութեան, սնունդ կը ստանանք օտար աղբիւրներէ, մեր հոգեբանութիւնը, արժէքները եւ դատումները կը ձեւաորոշուին օտարի պէս, նոյնիսկ եթէ շարունակենք տեսալ մը հայերէն խօսիլ, սպասելով որ այդքանն ալ անհետանայ: Եւ այս՝ հայկական ընկերութեան բոլոր մակարդակներուն: Մեր առջեւ անկում տեղի կ'ունենայ, եւ երբ դեկալարութիւններուն մաս կազմողները իրենք կու տան օրինակը հայերէն ընթերցումէ խզուելով, անտեղի վատաստութիւն ըլլալ հայկական շարունակականութեան վրայ խարսխուած սպազայ երեսակալել: Հետեւա՞նք...:

Կը սիրենք մեծ ծրագիրներ մշակել, անոնց մասին խօսիլ, անմիջական, մտաւոր եւ հետաւոր: Առանց ազգային հարազատութեամբ հաղորդուելու, որ պիտի գալ հայերէն բառ ու խօսքով, գիրքերով, ո՞ր հետանկարները կարելի է մշակել. ինչպէ՞ս կարելի է միացնել եւ զօրաշարժ ստեղծել: Եթէ համոզուինք ընթերցման կենսական անհրաժեշտութեան, ապա կը խորհինք լուծումներու մասին: Այս խնդիրը մանրուք կը համարենք, ոչ աղմուկ, ոչ շոճալից, հանդէսներու եւ բեմերու վրայ ամբողջական ճանի չի տրամադրուիր, եւ կարգախօսներով առաջնորդողներ չեն ուզեր զբաղիլ անոն: Կը պատահի՞ որ ամեակներու առիթով յայտարարուի, որ հայ մնալու եւ իրաւունք պաշտպանելու համար գիտակցի զանգուած պէտք է ըլլալ, հետեւաբար հայերէնով գիրքն ու ընթերցումը ոչ միայն մշակութային, այլ նաեւ քաղաքական անհրաժեշտութիւնն են: Հարց է թէ ինչպէ՞ս տեղի պիտի ունենայ վերականգնումը, ի՞նչ միջոցներով, որպէսզի պատմենք թէ "ուրանք քարտանքը ետ թողնել Ախուրեան գետի կամուրջը: Նօսր փոշեխառն օդի մէջ իսկոյն երեսացին Անի քաղաքի նորոգում պարիսպներն ու աշտարակները... բեռնուած գրաստներ իր հետիւտն անցնողներ խմբերը ձուլուելով իրար՝ ուղղուեցին դէպի քաղաքի բացուող դռները":

Ինչպէ՞ս սպրիլ հայօրէն, հայոց իրաւունքի պաշտպանութիւնը հետապնդել, երբ մեր ուղիի բջիջներուն մէջէն կը բացակային այս պատկերները, եւ կը նստին օտարաբան ու օտարախոս գրաչափները:

Գիրքը եւ ընթերցումը՝ երաշխիք հայադրոջ սպազայի:

Յ. ՊԱԼԵԱՆ  
("Հորիզոն" Մոնթրէալ)

## ՀԵՏԱԲՈՐՔՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ «ԱԲՍԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐԽԻՒՆԵՐԷՆ

Յրանական «Աբսա» ապահովագրական ընկերութեան արխիւները կը պարունակեն ապշեցուցիչ տուեալներ:

Այս ընկերութեան մէջ իրենց կենսանքը ապահովագրած են նաեւ Երիտրոյրբերու դեկալարներէն՝ դոկտոր Նազըմը եւ Թայեաթ փաշան: Նոյն արխիւներէն կը հաստատուի, որ ընկերութեան մօտ խորհրդատու-իրաւաբան աշխատած է նաեւ նահատակ հայ գրող, Թուրքիոյ խորհրդարանի անդամ, երեսփոխան Գրիգոր Զոհրապը:

«Աբսա»-ի մօտ յայտնաբերուած են Գրիգոր Զոհրապի ստորագրութեամբ բազմաթիւ փաստաթղթեր: Փաստաթղթերը կը վկայեն, որ հայ մեծ գրողին նահատակութենէն ետք, «Աբսա» ընկերութիւնը փոխհատուցում կատարած է: Այս իրաւունքն զրկուած են ցեղասպանութեան հազարաւոր գոհերու պարագաներ:

Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներուն, Թուրքիոյ մօտ Միացեալ Նահանգներու դեսպան, հայ ժողովուրդի բարեկամ Հենրի Մորկընթաու նամակ մը կը ստանայ Թայեաթ փաշայէն, որ վերջինս կը պատահել ամերիկեան եւ այլ ապահովագրութեան ընկերութիւններուն եւ դրամատուներուն մէջ գումարներ ունեցող հայերու ցուցակը: Թայեաթ, արեւմտեան դրամատուներուն եւ ապահովագրական ընկերութիւններուն մօտ գումարներ ձգած հայերուն գումարները կը նկատէ Օսմանեան կայսրութեան օրինական սեփականութիւնը, որուն համար Մորկընթաու կը պատասխանէ. «Սա այն մեծագոյն կեղծիքն ու կոտորածն է, որ մարդկային միտքը կրնար արտայայտել»: Հայերը նոյնպէս մէկ քանի փորձ կը կատարեն ստանալու իրենց հասնելիքը:

1928-ին, Շրնելի մէջ ստեղծուած «Ազգերու Լիկա»-ի կից՝ «Պատերազմի ընթացքին տեղահանումներու ու որբացումներու» յանձնաժողովին, Հայկական դիմում կը ներկայացնէ Սահակ կարողիկոսը՝ առաջարկելով վերադարձնել հայութեան պատկանող գումարները, իրեն փոխհատուցում անոր կրած բազմաթիւ զրկանքներուն: Դիմումը կը մնայ անարձագանք:

Հայկական Յեղափոխութենէն 90 տարի ետք միայն, սկիզբը՝ "New York Life"-ը, ապա՝ «Աբսա»-ի դէմ բարձրացած հայերը ստացան զոհացում:

ՊԱՅՈՒՆ ԲԱՆ									
Թ	Ն	Ր	Ք	Ի	Ր	Ա	Լ	Ա	Գ
Ը	Ա	Ի	Ա	Ե	Ր	Կ	Ե	Ի	Ա
Ն	Կ	Ր	Ս	Ք	Կ	Ա	Տ	Ս	Ս
Տ	Ր	Ո	Թ	Կ	Յ	Թ	Ո	Ի	Ա
Ր	Ե	Ի	Ը	Ե	Ո	Ա	Ն	Ա	Կ
Ա	Կ	Ա	Ն	Ր	Ի	Յ	Պ	Ա	Գ
Ն	Ք	Խ	Թ	Ա	Ր	Ա	Ն	Ա	Յ
Ի	Ա	Լ	Ա	Գ	Ի	Ջ	Ն	Ա	Յ
Ա	Ի	Ա	Ք	Գ	Ր	Ն	Ո	Ե	Ր
Ա	Կ	Ն	Ր	Ի	Ը	Ի	Ա	Ո	Կ
Ա	Կ	Ի	Ք	Ա	Կ	Ն	Ր	Ա	Լ
Ն	Ո	Ն	Թ	Ն	Գ	Ա	Ս	Ա	Կ
Ք	Ղ	Ա	Ա	Ի	Ա	Կ	Ն	Վ	Ե
Ն	Ա	Տ	Ն	Ր	Ա	Ս	Ս	Լ	Ի
Ի	Կ	Ն	Կ	Ծ	Ա	Ա	Ա	Ղ	Ա
Մ	Ի	Ը	Ա	Ա	Ր	Ի	Պ	Տ	Մ
Ա	Յ	Մ	Գ	Ղ	Ն	Ա	Գ	Ի	Ո
Ս	Ի	Թ	Ի	Ա	Պ	Ա	Ր	Տ	Ջ
Տ	Յ	Ը	Ն	Ծ	Ա	Յ	Ի	Գ	Ի

Պահուած քաղը՝ ՄՍԱԳՈՐԾԻ ԴԱՆԱԿ (6 տուն)  
Նախորդինպատասխանը՝ ԿԱՆԱՄԻԻ

Ա.ԿԱՆ.Ջ	ԴԵՐԱ.ԿԱՍԱՐ	ԹԹԵՆԻ
Ա.ԿԱՆ.ՋԱԼՈՒՐ	ԴԻԱՐԱՆ	ԹԹՈՒԱՇ
Ա.ԿԱՆ.ԿԱԼԵԼ	ԴԻՑԱՐԱՆ	ԹԻԱՊԱՐՏ
Ա.ԿԱՆ.ԾՐԻ	ԵԹԵՐ	ԹՈՒԱԿԱՆ
Ա.ՆԱ.ԳԱՆ	ԵԼԱՐԱՆ	ԻՄԱՍՏ
Ա.ՆԱ.ԿԱՆԱԼ	ԵԿՔԱՆԻԿ	ԻՄԱՍՏԱԼԻՑ
Ա.ՆՏԻԱԿԱՆ	ԵՂԱՆԱԿ	ԻՄԱՍՏԱԿ
Ա.ՊԱԼԵՐ	ԵՐԱՄԱԿ	ԻՆՔԱՆԱՐԱԻ
ԱՐԹԳԱԿ	ԵՐԿԱՐ	ԻՆՔԱՆԱՄՏՈՅՑ
ԱՐՄԱԻ	ԵՐԿԱՐ	ԻՍԿՈՅՆ
ԱՒԱՐՏԱԿԱՆ	ԵՐԿԱՐԱԿԵԱՑ	ԻՐԱՎԻՃԱԿ
ԳԱՀԱՒՈՐԱԿ	ԵՐԿԵԻԱՆ	ԻՐԱՏԵՍ
ԳԱՆՋ	ԸՆԹԱՑԱՒԱՐՏ	
ԳԱՆՋԱՐԱՆ	ԸՆԹԱՑՔ	ԿԱՆԵՓ
ԳԱԻԱԿ	ԸՆԾԱՅ	ԿԱՍԿԱԾ
ԳԵՂԱՆԻ	ԸՆԿԵՐ	ԿԱՍԿԱԾԱՄԻՏ
ԳԵՐԱՆ (2)	ԸՆՏԱՆԻ	ԿԱՐԿԱՄ
ԳԵՐԱՆԻԻ	ԸՆՏԱՆԻՔ	ԿԱՐՄԻՐ
ԳԼԻԱԻՈՐ	ԸՆՏԻՐ	ԿԵԱՆՔ
ԳՈՅԱՊԱՅՔԱՐ	ԸՆՏՐԱՆԻ	ԿԵՐԱԿՐԵԼ
ԳԱԳԱՐ	ԹԱՆԿԱԳԻՆ	ԿԹՈՑ
ԳԱԼԱՐԻՔ	ԹԱՐԹԵԻԱՆ	ԿՈՂԱԿԻՑ
ԳԱՆԱԿ	ԹԵՐԱԿԱՍԱՐ	ԿՈՂՄԵԱԿԻ
ԳԱՐԱՆ	ԹԵՐԱԻԱՐՏ	ԿՐԿԱԿԻ

ՄԱՒՏՈՔՈՒ									
			6		2				
2	6		3					4	8
	8	5				1			
3									
		9				8	2		
8	2	3							
			4		8	9			
									7
9					7				5

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետնելի պայմանով մը, որ հորի